ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի ավագ հարկադիր կատարողը՝

1. ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.
2. իրականացնում է Բաժնի կանոնադրությամբ նախատեսված առանձնակի տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողությունները՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերին համապատասխան.
3. իրականացնում է կատարողական վարույթով հետախուզվող գույքի կամ պարտապանի հայտնաբերման համար օժանդակող կատարողական գործողություններ, ներառյալ դրա համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների կիրառմամբ.
4. իրականացնում է կատարողական վարույթով հետախուզվող գույքի վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման համապատասխան կատարողական գործողություններ (արգելանք, առգրավում և այլն).
5. իրականացնում է օրենքով սահմանված կարգով պարտապանին կամ այլ անձանց պատկանող շենք, շինություն հարկադիր կարգով մուտքի ապահովմանն օժանդակող կատարողական գործողություններ.
6. իրականացնում է տարածքային այլ մարմիններում բարդ կամ ծավալուն կատարողական գործողությունների օժանդակություն.
7. մասնակցում է ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների գործադրման հնարավորություն ենթադրող այլ կատարողական գործողությունների.
8. իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներով օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարման միջոցների կիրառում.
9. նախապատրաստում է իր վարույթներով դիմում-բողոքների պատասխանի նախագծերը.
10. կատարողական վարույթներով կողմերին քրեական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության համապատասխան բաժնի հետ.
11. Ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձանց Ծառայության գործառույթներին ծանոթացնելու նպատակով նշանակվում է որպես փորձաշրջանի համակարգող.
12. մասնակցում է Ոստիկանության և այլ պետական մարմինների համատեղ շրջայցերին և այլ միջոցառումներին, որոնք ուղղված են Բաժնի, Ծառայության կանոնադրական խնդիրների լուծմանը.
13. կատարում է Բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջը.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարող կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն մեկ տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երկու տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: